

**Մարտակերտի շրջանի հանրակրթական դպրոցների
ուսուցչի թափուր տեղեր 2017-2018ուս. տարի
31.08.2017թ.**

1. **Վերին Հռոաթաղի մ/դ** - դասվար 16 ժամ, ֆիզկուլտուրա 23 ժամ-կրկնակի
2. **Կիչանի մ/դ** - քիմիա 10 ժամ, կենսաբանություն 10 ժամ
3. **Ծմակահողի հիմն.**- ֆիզկուլտուրա- 9 ժամ կրկնակի,
4. **Քոլատակի մ/դ** - Մաթեմատիկա -15 ժամ, ինֆորմատիկա 7 ժամ, շախմատ 4 ժամ –կրկնակի
5. **Պողոսագոմերի մ/դ** – աշխարհագրություն 4 ժամ–կրկնակի
6. **Կարմիրավանի հիմն.**- քիմիա 6 ժամ, կենսաբանություն 4 ժամ,
7. **Նոր Մարաղայի մ/դ** - դասվար -22 ժամ, ռուսաց լեզու -5 ժամ, անգլերեն - 4 ժամ
8. **Մարտակերտի №1 մ/դ** - դասվար - 1 հաստիք
9. **Վաղուհասի մ/դ** - անգլերեն - 20 ժամ կրկնակի
10. **Հաթերքի մ/դ** - ֆիզկուլտուրա 12 ժամ կրկնակի
11. **Չլորանի մ/դ** - կենսաբանություն 10 ժամ կրկնակի
12. **Ճանկաթաղի մ/դ** – ֆիզիկա 9 ժամ կրկնակի
13. **Մատաղիսի մ/դ**-հայոց լեզու 13 ժամ կրկնակի, աշխարհագրություն 10 ժամ կրկնակի, պատմություն - 6 ժամ կրկնակի, ՀԵՊ- 7 ժամ կրկնակի, մաթեմատիկա- 15 ժամ կրկնակի, ինֆորմատիկա - 7 ժամ կրկնակի, դասվար -20 ժամ կրկնակի, ֆիզկուլտուրա - 22,5 ժամ
14. **Զարդախաչի հիմն.** – կենսաբանություն -5 ժամ կրկնակի, կենսաբանություն -5 ժամ կրկնակի, անգլերեն -8 ժամ կրկնակի
15. **Շահմասուրի հիմն.** - գերմաներեն 8 ժամ կրկնակի, պատմություն 8 ժամ կրկնակի
16. **Աղաբեկալանջի հիմն.** – ռուսաց լ. 9 ժամ կրկնակի, ՆԶՊ- 0,5 հաստի ք կրկնակի, պատմություն 8 ժամ կրկնակի, ֆիզկուլտուրա 6 ժամ կրկնակի
17. **Մեծշենի մ/դ** - հայոց լեզու և գրականություն – 6 ժամ
18. **Կոճողոտի մ/դ** - գերմաներեն 10 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼԴՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. 25-26, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. 23-24 համարներում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատետեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼԴՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 23-27-ն ընկած ժամանակահատվածում. մանրամասը տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց: